ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝-Խմբային աշխատանքի միջոցով համագործակցային կարողունակությունների զարգացումը

Հետազոտող ուսուցիչ՝ -Վարդանուշ Պողոսյան

Այգեշատի Յուրա Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Նարինե Վասիլյան

ԱՐՄԱՎԻՐ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան ---------- էջ 3

2. Գրականության ակնարկ ---------- էջ 6

3. Գործնական համատեքստ ---------- էջ 11

4. Դասապլաններ ---------- էջ12

5. Եզրահանգումներ ---------- էջ18

6. Գրականության ցանկ ---------- էջ 20

Նախաբան

Համագործակցությունը մեր դարի բնութագրիչներից մեկն է: Համագործակցային մանկավարժությունը, որը մշակվել է մանկավարժների կողմից, ուսուցիչների և աշակերտների հարաբերությունները դիտարկում է նոր մակարդակում՝առավել մարդասիրական ու վստահության հիմքերի վրա:Ուսումնական համագործակցության մանկավարժությունը, որը տարգմանվում է նաև համագործակցային մանկավարժություն, հիմնվում է ոչթե առանձին սովորողների մրցակցության, այլ նրանց համատեղ աշխատանքի վրա: Ինչպե՞ս է այն կազմակերպվում:Եթե մենք մի քանի աշակերտի հավաքենք մի խմբում ու նրանց խնդրենք ուսումնական գործընթացում օգնել միմյանց, ապա դրանով դեռևս չենք ապահովի համագործակցային ուսուցում: Համագործակցային ուսուցումը ավելին է, քան պարզապես մի խմբում լինելը:

Կոլեկտիվ աշխատանքին շատ բան կարող է խանգարել.

- Քիչ պատրաստված աշակերտները կարող են իրենցից ընդունակներին զիջել խմբին հանձնարարված ամբողջ աշխատանքը կատարելու հնարավորությունը, իսկ իրենք միայն ձևականորեն մասնակցեն խմբային աշխատանքներին: Միաժամանակ ընդունակներն էլ կարող են աշխատել իրենց ուժերի կիսով չափ:
- Խմբային հանձնարարությունների ժամանակ սովորաբար աշակերտներն աշխատանքը բարդում են խմբի առաջնորդների վրա, որոնք էլ խումբը տանում են իրենց ուզած ուղղությամբ: Ինչպես Աստվածաշնչում է գրված, ով շատ ունի,

նրա ունեցածը կավելանա: Օրինակ, երբ գերազանցիկները խմբի մյուս անդամներին բացատրում են հանձնարարության իմաստը, քննարկվող հարցի վերաբերյալ նրանց գիտելիքները ավելանում են, մինչ-դեռ մյուսները մնում են որպես պասիվ ունկնդիրներ:

- Կոլեկտիվ աշխատանքը կարող է հանգեցնել այնպիսի անցանկալի հետևանքների, ինչպիսիք են անօգնականության զգացումը, պատասխանատվությունից խուսափելը, ուրիշի հաշվին գլուխ պահելը, ուսման նկատմամբ հետաքրքրությունը կորցնելը, պարտականությունների անհավասար բաշխումը (Ես միշտ պետք է մտածեմ ու թելադրեմ, իսկ դու պետք է գրառես իմ մտքերը), հեղինակությունների նկատմամբ անհիմն հավաստը, գործին խանգարող վեճերը, կոլեկտիվի ներսում ծնված խժդժությունները և այլն:

Հաճախ կոլեկտիվ ջանքերը ցանկալի արդյունք չեն տալիս: Բանն այն է, որ արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ են որոշակի նախադրյալներ.

1. կոլեկտիվի անդամների գիտակցված ստեղծագործական համագործակցություն,

2. մասնակիցների ակտիվ ստեղծագործական հարաբերություններ,

3. համատեղ աշխատանքին գիտակցական մասնակցություն և պատասխանատվություն ընդհանուր գործի հաջողության համար,

4. զույգով կամ փոքր խմբով աշխատելու հմտություններ,

5. արդյունավետության բարձրացման նպատակով խմբի ներսում աշխատանքի ընթացքի մասին քննարկումների պարբերաբար կազմակերպում:

Համագործակցային ուսուցման ժամանակ երեխաների խմբերը միասին աշխատում են մեկ դասի կամ մի քանի շաբաթվա ընթացքում՝ միասին ինչ-որ նոր բան իմանալու կամ կոնկրետ հանձնարարություն կատարելու համար: Այս մեթոդն արդյունավետ է շատ դեպքերում՝ նոր նյութի հետազոտության, ինչ -որ խնդրի լուծման, գիտափորձ կատարելու, նոր բան ստեղծելու ժամանակ:

Նախքան համագործակցային ուսուցման մեթոդի մանրամասն ուսումնասիրությունը՝ անդրադառնանք այն հարցին, թե որն է ուսուցչի դերը այս դեպքում:

Ղեկավարել, այլ ոչ թե միջամտել

Նախքան համագործակցային մեթոդով դաս կազմակերպելը՝ ուսուցիչը պետք է որոշի, թե որն է լինելու իր դերը: Նա պետք է գիտակցի, որ այս դեպքում ուսուցման գլխավոր խնդիրը սովորողներին կոնկրետ գիտելիքներ հաղորդելը չէ, այլ նրանց հետ միասին այդ գիտելիքները ձեռք բերելը:

Դասարանը բաժանում է ուսումնական խմբերի, սովորողներին մեկնաբանում է քննարկվող թեմային առնչվող հիմնական հասկացություններն ու մեթոդները, ստուգում է, թե ինչպես են աշխատում խմբերը, օգնում է երեխաներին ձեռք բերել խմբային աշխատանքի կարողություններ, հաղթահարել աշխատանքի ընթացքում ծագած բարդությունները, գնահատում է որոշակի չափորոշիչների վերաբերյալ սովորողների գիտելիքները, ապահովում է կոլեկտիվ աշխատանքի արդյունավետությունը: Մնացածն արդեն (առանց ուսուցչի օգնու թյան) անում են սովորողները. հաղորդակցվում են միմյանց հետ տեղեկատվություն ձեռք բերելու, այն դասակարգելու նպատակով, կարծիքներ են փոխանակում միմյանց հետ, կազմակերպում են իրենց աշխատանքը խմբի ներսում:

Համագործակցային ուսուցմամբ դասերի կազմակերպման ժամանակ ուսուցիչը պետք է լուծի վեց հիմնական խնդիր.

1. որոշել դասի (պարապմունքի) նպատակները,

2. նախապատրաստական աշխատանք կատարել, որը ներառում է՝

ա) խմբերի ձևավորում,

բ) դասասենյակի (տարածքի) նախապատրաստում,

գ) խմբի ներսում մասնակիցների դերերի որոշում,

3. ներկայացնել առաջադրանքը (ինչ են կատարելու, ինչ նպատակով, ինչ արդյունքներ են ակնկալվում) և խմբերին տալ հանձնարարություն,

4. օգնել աշակերտներին սկսել աշխատանքը խմբերի ներսում,

5. հետևել աշխատանքի արդյունավետությանը, միջամտել միայն ամենաանհրաժեշտ դեպքերում,

6. գնահատել աշակերտների մասնակցությունը, լսել խմբի անդամների կարծիքը սեփական աշխատանքի և խմբի ներսում ընկերների հետ համագործակցության վերաբերյալ:

Գրականության ակնարկ

Խորհրդային դաստիարակության տեսության հիմնարար դրույթը կոլեկտիվի և կոլեկտիվի միջոցով իրականացվող դաստիարակությունն էր: Խորհրդային ժամանակներում շեշտը դրվում էր կոլեկտիվի գաղափարական-քաղաքական ազդեցության վրա անհատի, նրա շտկող-վերահսկող գործառույթի վրա, ինչը ներկայումս արդիական չէ: Ներկայումս, երբ ոչ միայն հռչակվում է, այլև փորձեր են արվում իրականացնելու անհատակենտրոն մանկավարժության գաղափարները, շատ մանկավարժներ կամ դադարել են խոսել խմբային աշխատանքի ձևավորման խնդիրների մասին, կամ ամեն կերպ փորձում են քողարկել այդ խնդիրը, ավելի շատ շեշտը դրվում է ներխմբային հարաբերությունների սոցիալ-հոգեբանական կողմերի վրա:

Խմբային ուսումնական գործընթացի կառուցվածքային հիմքում ընկած է մանկավարժ-սովորող խմբի փոխազդեցության ձևը: Խմբայինի ուսուցման կառուցվածքային հիմքը յուրաքանչյուրը յուրաքանչյուրի հետ փոխազդեցության ձևն է, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել համընդհանուր համագործակցության ու փոխօգնության վրա հիմնված ուսուցման գործընթաց: Սովորողների խմբի յուրաքանչյուր անդամ իր ուսումնական նպատակներն ու խնդիրներն իրագործում է մյուսների օգնությամբ՝ միաժամանակ օգնելով մյուսներին իրագործել իրենց խնդիրներն ու նպատակները : Այստեղ սովորողների համագործակցությունը չի

սահմանափակվում միայն համատեղ քննարկումներով: Սովորողների միջևփոխազդեցությունը կազմակերպվում է փոխուսուցման, համատեղ ուսումնասիրությունների, փոխստուգման, փոխվարժանքի և այլ նմանատիպ նպատակներով: Սկսած միջին դարերից՝ սկզբնավորվում, աստիճանաբար ձևավորվում ու համընդհանուր գերակայություն է ստանում աշակերտների կոլեկտիվը՝ որպես ուսուցման կազմակերպման խմբային եղանակ :

Միաժամանակ, արդեն կայացած խմբային եղանակի ընդերքում սաղմնավորվում և աստիճանաբար նշմարելի իրողություն է դառնում ուսուցման կազմակերպման խմբային եղանակի գաղափարախոսությունը ներկայացնող համագործակցային ուսուցումը: Վերջին ժամանակներում լայն տարածում գտած ինտերակտիվ մեթոդները, որպես առաջին քայլեր, հնարավորություն են տալիս իրագործելու աստիճանական անցումն ուսուցման կազմակերպման խմբային եղանակից կոլեկտիվին:

Խմբային աշխատանքի միջոցով ստեղծվում է բարոյական բարձր ու գեղագիտական դաստիարակիչ հասարակական հարաբերությունների, գործունեության ու շփման համակարգ, որը նպաստում է երեխայի ձևավորմանը ու դասարանում յուրաքանչյուր աշակերտի անհատականության զարգացմանը:

Ցանկացած սոցիալական խումբ ունի ինչ-որ ընդհանրություն՝ սոցիալական ընդհանուր առմամբ առանձնացված որոշակի հատկանիշներով՝ ազգակցական, դասային, ազգային, համատեղ գործունեության բնույթով: Սոցիալական հոգեբանության մեջ խումբը կամ կոլեկտիվը սոցիալական միջավայրի փոքր խումբ մաս է կազմում, որտեղ իրականացվում է ամենօրյա մարդու կենսագործունեությունը, և որը հիմնականում պայմանավորում է նրա սոցիալական վարքագիծը, սահմանում է նրա կոնկրետ դրդապատճառները, ազդում անձի ձևավորման վրա: Ըստ Լ. Ի. Նովիկովայի՝ փոքր խումբը հատուկ խումբ մարդկային ընդհանրության, որն ունի հետևյալ բնութագրերը՝ հարաբերությունների հիերարխիա, աշխատանքի բաժանում, համատեղելիություն, գործունեության համակարգում, կազմակերպության գործընթացներ և վերահսկում : Կոլեկտիվի

նշված հատկանիշներին որոշ հետազոտողներ ավելացրել վարքագծային միասնական արժեքներն ու կանոնները, ընդհանուր շահերն ու նպատակները:

Շփման օգնությամբ խմբային աշխատանքի միջոցով ձևավորվում է կոլեկտիվ: Խումբը մարդկանց մի ամբողջություն է, որը առանձնացված է որևէ մեկի կամ մի քանի, նրանց համար ընդհանուր առանձնահատկությունների հիման վրա: Խմբի զարգացման բարձրագույն աստիճանը կոլեկտիվ է: Կոլեկտիվը մարդկանց բարձր զարգացած խումբ է, որտեղ հարաբերությունները կառուցվում են բարոյականության դրական նորմերի վրա: Որքան խումբը իր զարգացման մակարդակով մոտ է կոլեկտիվին, այնքան ավելի բարենպաստ պայմաններ է ստեղծում անձի լավագույն կողմերի դրսևորման ու խթանման համար, նաև վատագույնի արգելակման համար: Եվ ընդհակառակը, որքան խումբը իր զարգացման մակարդակով պաշտպանում է կոլեկտիվից, այնքան ավելի շատ հնարավորություններ է ներկայացնում անձի վատ կողմերի փոխհարաբերությունների համակարգում դրսևորման համար՝ միաժամանակ արգելելով լավագույն ձգտումները: Մակարենկոյի մանկավարժական մանկավարժական համակարգի մեթոդաբանական հիմքը անձնավորության և հասարակության փոխհարաբերության հարցն է, որի հիմքում խմբային աշխատանքն է : Մակարենկոն սկզբունքորեն նորովի իմաստավորվեց խմբային աշխատանքի դերը երեխաների դաստիարակության գործում, որը նրա մանկավարժական պրակտիկայում վերածվեց դաստիարակչական ազդեցության առարկայի և ներգործում էր կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի վրա: Նրա կարծիքով՝ մանկավարժը միայն առաջին շրջանում է խմբի լիիրավ կազմակերպիչը: Դաստիարակչական գործառույթների զարգացմանը, ինքնակառավարման մարմինների ստեղծմանը և կոլեկտիվ հարաբերությունների ձևավորմանը զուգընթաց մանկավարժը ավելի ու ավելի է հետին պլան մղվում: Ի՞նչ է տալիս սովորորին լրալիս խմբային աշխարանքը:

- բավարարում է երեխայի հաղորդակցման ու ինքնահաստատման կարիքները,

- հանդիսանում է նրա կենսագործունեության ոլորտը (անձը մշտապես գտնվում է ինչ-որ միավորումներում, խմբերում՝ մտնելով բազմաբնույթ փոխգործակցության և այլ մարդկանց հետ փոխհարաբերությունների մեջ), հարուստ զգացմունքային փորձ,

- վարքագծային փորձ, որի սոցիալական արժեքը շատ կարևոր է երեխայի հետագա կյանքում,

- ստեղծում է պայմաններ շփվելու ու ուրիշների հետ շփվելու միջոցով ճանաչելու սեփական արժանիքներն ու խնդիրները,

- հնարավորություն է ընձեռում դրսևորելու իր անհատականությունը, ինքնադրսևորվել՝ ընտրելով այն, ինչը հետաքրքիր է, համապատասխանում է ուժերին և ունակություններին:[1]

Ըստ Մակարենկոյի՝ միայն խմբային աշխատանքի միջոցով է հնարավոր սովորողի գիտակցության մեջ արթնացնել հասարակական կարծիքի հզոր ուժը՝ իբրև կարգավորող ու կարգապահություն հաստատող դաստիարակիչ գործոն:

Երեխայի վրա կարելի է ներգործել՝ ազդելով այն խմբի վրա, որի անդամն է նա: Այդ դրույթը Մակարենկոն անվանել է «զուգահեռ գործողության սկզբունք»: Այդ սկզբունքի մեջ է իրագործվում խմբի՝«բոլորը մեկի, մեկը բոլորի համար» պահանջը: Մակարենկոն կոլեկտիվի կարևորագույն օրենքներից մեկը համարում էր «Կոլեկտիվի շարժման օրենքը», ըստ որի' եթե խումբը հասնում է առաջադրված նպատակին, սակայն իր առջև նոր նպատակներ չի դնում, երբ չկան այնպիսի ձգտումներ, որոնք կոգեշնչեն խմբի անդամներին, ապա այդպիսի խումբը ապագա չունի. դրա զարգացումը կանգ է առնում :[2] Դ. Բ. Էլկոնինը առանձնացնում է խմբային գործունեության վեց փուլեր: Առաջին փուլը կոչում է «պասիվ ծաղկում»: Երեխան խմբի հանդեպ դառնում է ակտիվ, ներգործող ոչ թե այլ երեխաների վարքագծի վրա ազդելու իր ցանկության պատճառով, այլ այն պատճառով, որ մյուս երեխաները ընդօրինակում են և հետևում նրան: Երկրորդ աստիճանը «մասնակի ծաղկում» է,

[1] Макаренко А. С., Методика организации воспитательного процесса //Педагогические сочинения: в 8-ми т., Т. 1 / сост.: Л. Ю. Гордин, А. А. Фролов, М.:Педагогика, 1983.
[2] Макаренко А. С., Педагогические сочинения в восьми томах, Том 3; Педагогика; Москва, 1984.

որն արտահայտվում է առանձին պահերին: Երրորդ աստիճանը «ակտիվ ծաղկումն» է, որն ընդգրկում է շփման գործընթացի զգալի հատվածներ, սակայն չի տարածվում ողջ գործընթացի վրա: Չորրորդ աստիճանը «ակտիվ ծաղկումն» է, որն ընդգրկում է ընդհանուր առմամբ համագործակցության գործընթացը:

Ա. Ս. Մակարենկոն (ով այդ սկզբունքը մտցրեց իր պրակտիկայում և անվերապահորեն հետևեց նրան) զգուշացնում էր, որ այդ միասնության անտեսումը կամ թուլացումը անխուսափելիորեն կհանգեցնի ակտիվի և բոլոր կոլեկտիվ հարաբերությունների քայքայմանը: Ակտիվ երեխաները պետք է ուսուցչից ստանան նրա վստահության ապացույցներ, պետք է հատուկ պահպանել նրանց հեղինակությունը ընկերների աչքերում ՝ հարգանք ցուցաբերելով նրանց նկատմամբ: Սակայն ակտիվի անդամներին ներկայացվող պահանջները պետք է ներկայացվեն բազմիցս ավելի լուրջ, քան մյուս սաներին: Խմբային աշխատանքի անցկացումը, ըստ Մակարենկոյի, պետք է անընդհատ լինի: Այն պետք է ուղղություն ստանա այնպիսի մանկավարժական կոլեկտիվի կողմից, որը ստեղծագործաբար որոնում է նրա առաջխաղացման առավել արդյունավետ ուղիները :

Այսպիսով, ամփոփելով ասվածը, կարելի է եզրակացնել:

1) խմբային աշխատանքն իրականացվումսովորողների խմբի միջոցով, որը ընդհանուր նպատակներով միավորված մարդկանց խումբ է, որը համատեղ գործունեության ընթացքում նպաստում է ձեռք բերված սոցիալական արժեքավոր հատկանիշների բարձր մակարդակի զարգացմանը,

2) խմբային աշխատանքի զարգացումն անցնում է մի շարք փուլերով՝ խումբ, խումբ-ասոցիացիա, խումբ-կոոպերացիա, խումբ-կոլեկտիվ,

3) խմբային աշխատանքը դաստիարակության գործիք է, որի զարգացումը պայմանականորեն հանդես է գալիս որպես դաստիարակչական նպատակ: Որպես նպատակայինձևավորման գործիք՝ զարգացնում է սովորողների կարողություններն ու հմտությունները,

4) խումբն իր անդամների վրա կարող է ունենալ կրկնակի ազդեցությունը ինչպես դրական, այնպես էլ բացասական,

5) զարգացում-խմբի անդամների հասունություն անցնում է մի շարք փուլերով՝ հակամարտություն, փոխզարարություն, արդյունավետություն, ամուր կապերի հաստատում:

Գործնական համատեքստ:Նպատակը և հետազոտության ընթացքը

Մեր ուսումնասիրության նպատակն է հետազոտել համագործակցային կարողունակության ձևավորումը խմբային աշխատանքի միջոցով:

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- դասի ժամանակ կատարել խմբային աշխատանք
- ուսումնասիրել աշակերտների խմբային աշխատանքը՝ որպես դպրոցականի ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր բաղադրիչ,
- ուսուցչի կողմից կատարել դիտարկում աշակերտների համագործակցային կարողությունները բացահայտելու համար
- իրականացված հետազոտության միջոցով վերլուծել և բացահայտել խմբային աշխատանքի դերը աշակերտների համագործակցային կարողությունները զարգացնելու գործում:

Թեմայի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկա սովորողակենտրոն կրթական գործընթացում աշակերտների մեջ համագործակային հարաբերությունների ձևավորումը կարևոր նշանակություն ունի և բխում է երեխաների մեջ այնպիսի հմտություններ ու ունակություններ ձևավորելու ու զարգացնելու պահանջից, որոնց ուսումնադաստիարակչական

պարապմունքների այլ ձևերում լիովին չեն դրսևորվում: Խմբային աշխատանքը նպաստում է երեխայի համակողմանի զարգացմանը:

Հետազոտության ընթացքը

Համագործակցային խմբերի աշխատանքի արդյունավետության վերահսկումը և անհրաժեշտության դեպքում այդ աշխատանքներին միջամտելը.

Սովորողների վարքի վերահսկումը և առաջադրանքի կատարման ժամանակ նրանց օգնություն ցուցաբերելը. Ուսուցչի աշխատանքը փաստորեն սկսվում է անմիջապես այն պահից, երբ երեխաներն իրենց խմբերում անցնում են առաջադրանքի կատարմանը: Նա հետևում է, թե ինչպես են սովորողները համագործակցում միմյանց հետ, որպեսզի պարզի, թե որքանով են նրանք յուրացրել ուսումնասիրվող նյութը, և գնահատի նրանց միջանձնային շփումների և փոքր խմբերի կազմում աշխատելու համար անհրաժեշտ հմտությունները: Այս դիտարկումները կարելի է կատարել ինչպես հատուկ մշակված չափանիշների/չափորոշիչների օգտագործմամբ (աշակերտներին դրանք պետք է հայտնի լինեն), այնպես էլ սովորողների գործողությունների միայն արժեքային գնահատմամբ:

Ուշադիր լսելով, թե ինչպես են աշակերտները միմյանց բացատրում ուսումնասիրվող նյութը՝ ուսուցիչը հասկանում է, թե նրանք ինչն են յուրացրել, և ինչն է մնացել չհասկացված: Համագործակցային խմբերի կողմից նյութի քննարկումներին հետևելը հնարավորություն է տալիս ուսուց չին հասկանալու երեխաների մտքի ընթացքը, նկատելու դրանց ուժեղ և թույլ կողմերը և անհրաժեշտության դեպքում միջամտելու դրան:

Սակայն քննարկումներին հետևելն ունի ևս մեկ կարևոր նպատակ, ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողների աշխատանքը, օգնի նրանց գտնելու իրենց առաջադրված խնդրի կատարման արդյունավետ եղանակներ, պատասխանի նրանց հարցերին, նպաստի աշակերտների կողմից առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերմանը: Աշակերտների հետ նոր նյութին առնչվող գաղափարներն ու փաստերը քննարկելիս ուսուցիչը պետք է հետևի աշակերտների մտքերին և դրանց նկատմամբ ցուցաբերի համապատասխան արձագանք:

Խմբերի աշխատանքը վերահսկելիս ուսուցիչը կարող է նկատել, որ որոշ աշակերտներ չեն կարողանում աշխատել խմբային աշխատանքի համար անհրաժեշտ հմտություններ չունենալու պատճառով: Այդպիսի դեպքերում նա անպայման պետք է միջամտի՝ խմբին առաջարկելով այնպես կազմակերպել աշխատանքը, որ դրան բոլորը մասնակցեն, կամ հիշեցնի նրանց համատեղ աշխատելու կարևորությունը: Նա կարող է միջամտել նաև աշակերտներին խրախուսելու նպատակով, երբ նկատում է, որ նրանք հարցի հաջող լուծում են գտել կամ ճիշտ են կառուցում միմյանց հետ իրենց միջանձնային հարաբերությունները:

Աշակերտները պետք է իմանան, թե ինչպես է գնահատվելու իրենց աշխատանքը: Մինչև պարապմունքը սկսելը արդեն պետք է հայտնի լինեն կատարվող աշխատանքի գնահատման չափանիշները: Այլ կերպ ասած՝ համագործակցային ուսուցման ժամանակ աշակերտների աշխատանքը պետք է գնահատվի որոշակի չափանիշներով:

Սկզբում նրանք պետք է ըմբռնեն խմբային աշխատանքի կանոնները՝ հարկավոր է նատել և միասին աշխատել, այլ ոչ թե շրջել դասարանում, խոսել ցածրաձայն (գրադարանային ձայնով), որպեսզի չխանգարեն մյուս խմբերի աշխատանքը, անհրաժեշտության դեպքում ընդմիջումներ անել: Երբ համագործակցային խումբն սկսում է իսկապես աշխատել, արդեն կարելի է վստահ լինել, որ նրանք կջանան անել հետևյալը.

- խմբի յուրաքանչյուր անդամի հնարավորություն տալ ասելու, թե իր կարծիքով ինչպես պետք է կատարել առաջադրանքը,

- համոզվել, որ խմբում բոլորն են յուրացրել նախորդ պարապմունքի ժամանակ ուսուցանվող նյութը,
- համոզվել, որ ծանոթացել են ուսումնասիրվող նյութին ամբողջությամբ և նրա հիման վրա կատարել համատեղ եզրահանգումներ,
- աշխատանքում ներգրավել խմբի բոլոր անդամներին,
- ուշադրության արժանացնել խմբի յուրաքանչյուր անդամի կարծիք,
- հաստատ մնալ որոշումների մեջ և սեփական տեսակետը չփոխել, բացառությամբ այն դեպքերը, երբ ներկայացվում են ծանրակշիռ հիմնավորումներ (մեծամասնության կարծիքի գերակայության կանոնը չի նպաստում գիտելիքների ձեռքբերմանը),
- քննադատել տեսակետները, այլ ոչ թե դրանք ներկայացնող մարդկանց:

Աշակերտների հետ նրանց անելիքները քննարկելիս ուսուցիչը պետք է լինի հնարավորինս հակիրճ: Աշակերտները պետք է հասկանան, թե համատեղ աշխատանքի ժամանակ ինչքան կարևոր է կարգապահությունը, սակայն իրենց գործողություններում նրանք չպետք է չափազանց կաշկանդված լինեն:

Կոլեկտիվում պահանջվող վարքի կանոնները միանգամից չեն ձևավորվում:Դրա համար տևական աշխատանք է պահանջվում:

Հետազոտության համար ընտրվել է 8-րդ դասարանը, աշկերտների թիվը 19-ը , որից ինը՝ աղջիկ, տասը՝ տղա: Աշակերտներից վեցը սովորում է գերազանց առաջադիմությամբ, հինգ աշակերտ՝ միջին առաջադիմությամբ իսկ բավարար առաջադիմությամբ՝ ութ աշակերտ: Առաջին դասաժամին դասը կատարվեց ավանդական մեթոդով, որի ընթացքում աշակերտների մի մասն էր ակտիվ : Հարցադրումների միջոցով ուսուցիչը փորձեց ներգրավվել նաև պասիվ աշակերտներին: Երկրորդ դասաժամը անցկացվեց խմբային աշխատանքի մեթոդով, որի ընթացքում աշակերտների ներգրավվածությունը ամբողջովին էր, նույնիսկ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները ակտիվ մասնակցեցին դասին՝ հստակ կատարելով իրենց առաջադրված հանձնարարությունը: Ստորև ներկայացված են երկու դասաժամերին կիրառված դասի պլանները:

Դասի պլան 1

Դասարան---8-րդ

Առարկան--- հասարակագիտություն

Թեման----Մարդը և նրան շրջապատող բնական ու հասարակական միջավայրը

Նպատակը-պարզաբանել/մարդ, բնություն, հասարակություն / հասկացությունները

Հասկանալ մարդու և բնության փոխհարաբերությունը

Վեջնարդյունք—Հիմնավորի բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում, առաջարկի բնության և հասրակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր

Ուսումնական պարագաներ – դասագիրք, աշխատանքային տետր,թուղթ, մատիտներ գրատախտակ , նկարներ

Մեթոդը-մտագրոհ, հարցում , հարց ու պատասխան, ամփոփում

Դասի սկիզբը/3-5րոպե/-խթանում- կազմակերպել հարց ու պատասխան, դասանյութին վերաբերվող առանցքային հարցերով վեր հանել թեմայի գլխավցոր գաղափարը:

Դասի ընթացքը/20-25րոպե/- կազմակերպել հարցում , 5 աշակերտի կողմից ներկայացվեց թեման, բացատրվեց մարդուն շրջապատող բնական ու հասարակական միջավայրը,սահմանվեց/երկրորդ բնություն/հասկացությունը, կարևորվեց նաև մարդու վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ,գրատախտակին,դասի ընթացքում նեկայացվեց նաև թեմային վերաբերվող նկարներ, աշակերտներին հանձնարարվեց աշխատանքային տետրում

Գրի առնել նոր հասկացությունները

Ամփոփում- կատարել անդրադարձ հետևյալ հարցերով

1.Ինչ՞ է բնությունը

2.Որոնք՞ են հասարակություն- բնություն հարաբերությունների 4 փուլերը

3 . Ներկայումս ինչպիսի՞ վերաբերմունք պետք է ցուցաբերի մարդը բնության հանդեպ:

Տնային առաջադրանք-հանձնարարել աշակերտներին լրացնել հետևյալ աղյուսակը

Բնության համակարգ	Հասարակության վնասակար ազդեցություն	Ինչպես չեզոքացնել այն
Մթնոլորտ		
Հող		
Ջուր		
Բուսականություն		
Կենդանական աշխարհ		

Դասի պլան---2

Ուսուցիչ—Վարդանուշ Պողոսյան

Առարկան—Հասարակագիտություն

Դասարանը---8-րդ

Թեման---Մարդը և նրան շրջապատող բնական ու հասարակական միջավայրը

Նպատակը-պարզաբանել/մարդ, բնություն, հասարակություն / հասկացությունները

Հասկանալ մարդու և բնության փոխհարաբերությունը

Վեջնարդյունք—Հիմնավորի բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում, առաջարկի բնության և հասրակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր

Ուսումնական պարագաներ – դասագիրք, աշխատանքային տետր,թուղթ, մատիտներ գրատախտակ , նկարներ

Կիրառվող մեթոդները- մտագրոհ, դասախոսություն, խմբային աշխատանք

Դասի սկիզբը/3-5րոպե/-կատարել մտագրոհ /բնություն / բառով,արտահայտված մտքերը գրել գրատախտակին և անել եզրահանգում

Դասի ընթացքը-/20-25րոպե/ -կարճ դասախոսության միջոցով ընդհանուր պատկերացում տալ մարդուն շրջապատող բնական ու հասարակական միջավայրի վերաբերյալ , բացատրել /երկրորդ բնություն/ հասկացությունը:Դասարանը բաժանել 4 խմբի

1.խումբ—Բնության գերակայության դարաշրջան

2 խումբ- բությանն աստիճանաբար հակադրվելու դարաշրջան

3խումբ-բնության վրա գերիշխանության դարաշրջան

4 խումբ- բնության արժևորման և պահպանման դարաշրջան

Յուրաքանչյուր խումբ ուսումնասիրելով իրեն հանձնարարված նյութը, պաստառի վրա պետք է ներկայացնի իր թեմայի բովանդակությունը:

Խմբերին լսելուց հետո համակագչի կամ համապատասխան նկարների միջոցով ցույց տալ թեմային վերաբերվող պատկերներ:Թվարկել բնությունը վնասող մի շարք խնդրիներ:

Ամփոփում/5-10րոպե/- կատարել /անդրադարձ/հետևյալ հարցերի միջոցով ամփոփել թեման

1.Ինչ՞ է բնությունը

2.Որոնք՞ են հասարակություն- բնություն հարաբերությունների 4 փուլերը

3 . Ներկայումս ինչպիսի՞ վերաբերմունք պետք է ցուցաբերի մարդը բնության հանդեպ :

Տնային առաջադրանք/3-5րոպե/ Լրացնել աղյուսակը

Բնության համակարգ	Հասարակության	Ինչպես չեզոքացնել այն

	վնասակար ազդեցություն	
Մթնոլորտ		
Հող		
Ջուր		
Բուսականություն		
Կենդանական աշխարհ		

Ստացված Արդյունքների հիման վրա կազմեցինք հետևյալ գրաֆիկական պատկերը, որում ներկայացված է երկու դասերի ընթացքում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների մասնակցության աստիճանը:



Գրաֆիկ 1. Ավանդական և խմբային մեթոդների արդյունավետությունը

Եզրակացություն

Մեր դիտարկումների ընթացքում հանգեցինք այն եզրակացության, որ խմբային աշխատանքը սովորողների ինքնուրույնության, ձևավորման լավագույն ձևն է: Միասին աշխատելով աշակերտները կարող են համատեղ նպատակների հասնել: Այն ապահովում է սովորողների ճանաչողական գործընթացների(խոսք, հիշողություն, մտածաղություն) և սովորողների անհատական հաղորդակցական- զգայական ոլորտի զարգացմանը:

- Ուսումնասիրելով և վերլուծելով համապատասխան գրականությունը, եկանք այն համոզման, որ խմբային աշխատանքի ուսուցման կիրառումը դպրոցում նպաստում է դպրոցականների անձի սոցիալականացմանը և ինտեգրմանը հասարակության մեջ:

- Ուսումնասիրությունների արդյունքում վերլուծված են խմբային աշխատանքի ուսուցման մի շարք մեթոդներ, որոնք առավել արդյունավետ, հետաքրքիր են դարձնում ուսուցման գործընթացը:

- Մեր կողմից մշակված դասերի նմուշ օրինակները խմբային աշխատանքի կիրառմամբ միտված են ուսուցման գործընթացի բարելավմանը, սովորողների համագործակցային կարողությունների ձևավորմանը:

Մեր հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ խմբային աշխատանքը սովորելու անհատական ոճ է, սովորողների ինքնակատարելագործման և դրդապատճառների իրականացման լավագույն ձև:

Ամփոփելով հետազոտական աշխատանքը ուզում եմ մեջ բերել հետևյալ խոսքերը՝

Այն, որ մենք հավաքվել ենք միասին միայն սկիզբն է: Այն, որ մենք շարունակում ենք մնալ միասին արդեն ձեռքբերում է : Այն, որ մենք միասին աշխատում ենք իսկական հաջողություն է:

Հենրի Ֆորդ

Օգտագործված գրականության ցանկ

1. Браун Р., Межгрупповые отношения // Перспективы социальной психологии. М.,

2001.

2. Коджаспирова Г.М., История образования и педагогической мысли: Таблицы, схемы, опорные конспекты: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений., М., 2003.

3. Конникова, Т.Е., Коллектив и формирование личности школьника / Т.Е. Конникова. - М.: Просвещение, 2000.

4. Макаренко А. С., Методика организации воспитательного процесса // Педагогические сочинения: в 8-ми т., Т. 1 / сост.: Л. Ю. Гордин, А. А. Фролов, М.: Педагогика, 1983.

5. Макаренко А. С., Педагогические сочинения в восьми томах, Том 3; Педагогика;

Москва, 1984.